

Հանձնած դեպքում՝ զինամիտվել, և վարվել այնպես, ինչպես որ իր օգուտը և հանգամանքները կը պահանջեն: Իդիսի անորոշ կերպիւ յայտնած չէգործութիւնը, Գրանսիայի կայսրի համար շատ պարզ հասկանալի էր, որովհետեւ միւս ծանուցարարի մէջը, որը պիտի գաղտնի պահուէր ամէնքեց, և չը հրատարակուէր, գրած էր շատ որոշ կերպիւ: Ահա էն որոշ խօսքերը:—Աշխատեցէր զիրենիս՝ կայսրին և նրա նախարարներին, որ Գրանսիայի գործը համարում էին մեր սեփական քործը, և կաշխատենք նպատակաւ աշխարհը, որքան կը հարկաւոր է ապահովագրել նրա գէնքի յաջողութիւնը: Ահա թէ ինչ էր յանձնած Աւստրիացոց զեպան Մետերնիին «կրկնել» կայսրին և նրա նախարարներին: Ուրեմն, էդ բանը, բայց էդ անդամից գործնալ ասված էր: Այդ իրողութիւնները յայտնելուց յետոյ, Գրամօնը հարցնում է հիմի բոլոր ազնիւ մարդկերանց, — ճշմարիտ է թէ ոչ, որ Աւստրիան 1870 թուի պատերազմում խօստացել էր Գրանսիային իր օգնութիւնը...

Ազնիւ մարդիքը հաւանական համարեցին, բայց ոչ բոլորովին ճշմարիտ, քանի որ Գրամօնը յիշեալ ծանուցարարի իսկականը պահել է, ու ոչ ոքի չէ կամենում ցոյց տալ, բայց արի տես, թէ ինչ բան որ, ինքը Գրամօնը իր նամակով չը կարողացաւ զուտ ճշմարտութիւն համարել առ մի և նոյն բանի համար, աշխատեցին իրան Գրամօնի հակասակորդները: Պ. Բէյստը որը պատերազմի ժամանակ Աւստրիայի կայսրութեան առաջին կանցլէրն էր համարվում, և արտաքին գործոց նախարարութեան պաշտօնն էր վարում, որի գրգռմամբ և ձեռքովը սկսեց էր Գրամօնի ակնարկած գաշնակցական իրողութիւնները գլուխ գար, այդ պ. Բէյստը, յայտնի է Եւրոպային իրրեւ իշխան Բիսմարկի անհաշտ և ռևերիմ թշնամիներէն մէկը: Ի հարկէ, Գրամօնի խօսքերը որքան էլ որ ճշմարիտ լինէին ոչ ոք հաւատարէ չէր, եթէ պ. Բէյստի այդ թշնամական իրողութիւնը իշխան Բիսմարկի վերաբերութեամբ չը լինէր, որը այս գարնանց հարցի մէջ մեծ դեր է խաղում: Ես ուզեցի երկու նամակ պ. Գրամօնին, հերքելու նրա ասածները, և ջնջելու իր վերայից այն կեղտը թէ:— Գրանսիային խօստացել էր Աւստրիայի օգնութիւնը, բայց երբ Վէյսնրուրգի և Վէրտի մօտ Պրուսացիք յայտնեցին Գրանսիացոց, իսկոյն ոտը յետ խփել, և բարձի թողել է արել իր գաշնակցին: Այդ երկու նամակն էլ գրուած է, ամենաքաղաքավարի ձևով, և զերազանցում է, իր բոլորովին օշինջ բան չը պարզող պարունակով թէ և ամբը: Մի բան միայն պարզ երևում է, որ Բէյստը ամեն հնարքը գործ է գրել իր պատասխանի մէջ՝ որ Գրամօնը չը վերադառնար, չը գրգռուի և եթէ կայ հնարք, աշխատի ընդհակառակը լռել այդ հարցի մասին, և թողնել միտութեան մէջ, այն քաղաքական բանակցութեանց յարաբերութիւնները, որ մինչև Սէզանի օրերը եղել է Եւրոպայի Մի-ի կայսրութեան և Աւստրիայի մէջ:

Գրամօնը երկու անգամ պատասխանեց պ. Բէյստին, երկու անգամու մն էլ կրկնեց իր խօսքերը: Բոլոր Վէյսնրուրգի բողոքները գրեցին Գրամօնի գէտ, բայց այնու ամենայնիւ, ոչինչ հաստատեւ գործի էութիւնը պարզող բան չը կարողացան ասել: Ի հարկէ, Աւստրիական օրագրութիւնը սուտ չէ ասում, որ Գրամօնը նոր համար է անում այդ բաները, որ կարողանայ համոզել Գրանսիացոց, թէ— Աւստրիան կօգնէր Կայսր Եւրոպային, եթէ Փարիզիցիք Սէզանի միւս օրը չը կործանէին

կայսրութիւնը և հանրապետութիւն չը հիմնէին: Կարծիր չը կայ, որ Գրամօնը իրրեւ Եւրոպայի հանդէպ իր սեփական անձն, միմիայն այդ նպատակաւ է աշխատում մերկացնել այդ իրողութիւնները: Որքան էլ որ ճշմարիտ լինի Աւստրիական լրագրողների խօսքերը Գրամօնի նպատակի վերաբերութեամբ, այնու ամենայնիւ գործնով չի կարելի հերքել այն բանը ինչ որ, շատ կարելի է թէ պատահել է: Հերցոգ-Գրամօնը խօստանում է ներկայացնել ծանուցարարի իսկականը, «Քրկնուողական մասնագործներ» երբ հարկը պահանջէ: Այժմ մնում է ոպասել ժամանակին, մինչև որ Գրամօնի ակնարկած— հարկը պահանջած օրը գայ:

ՆԱՄԱԿ ԶԻՒՐԻՒԹՅ

Ետպառում եմ հաղորդել ընթերցողին մի լուր, որ ինչպէս կարծում եմ յատերն հետաքրքիր կը լինի: Այսօր առաւօտը ինձ աջողկեցաւ մտնել այստեղի համալսարանի դասընթացը և ներկայ գտնուել մեր հայրենակից պ. Յ. Արեւելեանի առաջին դասախօսութեան: Այդ անուրը արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին: Այդտեղի համալսարանում քիմիայի դոկտորի դիպլոմը ստանալուց յետոյ, նա մնացած էր համալսարանում, վարելով քիմիական լաբորատորիումի կառավարչի պաշտօնը: Այժմ նա սրբիմաստ-զօցեցնում է նշանակվել և կարգաց այսօր իր առաջին դասախօսութիւնը:

Ինչ կը լինի յետոյ, երևի նա չուտով կը ստանայ և պրոֆեսորի տեղը և զանազան ուրիշ զիտնական աստիճանները: Ուրեմն Եւրոպայի գիտնականների թիւը մինով աւելացաւ: Եւրոպան ամեն բանից կամենում է շահվել, մինչև անգամ մեր պէս փոխրիկ ասիական երկրի մարդկներից օգուտ է քաղում: Բայց ո՞վ աւելի հարկաւորութիւն ունի մտածող և աշխատող մարդկների մէջ:

Կարելի կը լինի կարծել, որ մեր երկիրը, պատկասութիւնը դրայով դիտնական կերպով կը թվում և զարգացած մարդկների մէջ, ամենից շատ հարկաւորութիւն ունի դէպի իրան գրասել և աշխատանք տալ ճշմարիտ եւրոպական կերպով կըրթված մարդկներին, . . . բայց ընդհակառակն Շըվեյցարիայի մի համալսարան յօժարութեամբ ընդունում է երիտասարդ հայ-գիտնականին, տալիս է նրան ամեն միջոցներ ապագայ ասպարիզի զարգացմանը, — իսկ մեր. . . երբ մեզ մօտ երևում է նոր գիտնական ոյժը, նա հանդիպում է միայն անտարբերութեամբ կամ յարուցանում է դառն ծագածութիւն՝ «դու կամենում ես գիտնական լինելով, մեր չըբանը մտնել, բայց չես մտածում, որ այն ժամանակ մեր տղի տուր ինչու աւելի պարզ կերպ. . . է, է, դու մեզ հարկաւոր չես, դու մեզ համար վտանգաւոր ես: Դու ուզում ես մեզ տոլորեցնել. . . է, եթէ Աստուած կը սիրես, մեր հանգստութիւնը մի վրդովիր. . . որքան մեք աւելի աղէտ ենք, այնքան մեզ աւելի հնչա է հաշտել կեանքի զանազան անյարգարութիւնների ու թերութիւնների հետ, այնքան մեր կեանքը անվրդով կը լինի»:

Հասկանալի է, որ այդ տեսակ ընդունելութիւնը արդէն է լինում ոյժերից շատերն գիտնել այն երկիրը, որտեղ նրանք աւելի հարկաւոր են, որտեղ նրանք սկսեց է լինելին:— Ուր է վերկրկնելուս: Մինչև երբ պիտի տեի այդ երկարապատկութիւնը լուսաւորելու մարդիկ, և անգամ մեր լուսաւորելու անվանված հասարակութեան մասի մէջ: Միթէ մեր մի քանի անհասանելի երկրք չը պիտի աջովի խախտել մեր մտաւոր անշարժութիւնը: Եթէ նոքա այդ յայտով էլ չը պիտի սպրկեն, ինչ է նրանց նպատակը կեանքի մէջ, միթէ միայն անձնական նրկութեան ապահովութեան վերա հողալը, բայց անձնական ապահովութիւնը հասանելի է աւելի հասարակ միջոցներով և հարկաւոր չէ անպատճառ ընտրել զիտնական ծանր և դժուար ճանապարհը, այդ նպատակին հասնելու համար: Ոչ, ևս կարծում եմ, որ այդ նոր աշխատողների գոյութեան իրողութիւնը մտաւոր և գիտնական ասպարիզում, սպաւոյց է, որ նրանք աւելի բարձր նպատակներ ունեն, քան թէ անձնական ապահովութեան հոգը: Բայց եթէ այդպէս է, պէտք է ընդունել և մարքնի հոգը վրա աշխատելու անհրաժեշտութիւնը:

Դառն է, ծանր է, անտանելի է այս, գիտնալ և նախադրուակել, ինչ սարսափելի ջանքը պիտի գործ դրվին քո ցանկութիւնների մի փոքրիկ մասը

իրադրածու համար, որ դու ամէնքին քեզ դէմ կունենաւ և ոչքին քո կողմը, որ դուն ինքը չուտով կը մայրես, դուցէ մաւտարակէ բոլորովին կամ մասամբ, կընկնես: Բայց ինչ արած: Առաջին շարքերը ճշմարիտ մտաւորապէս ապրող մարդկների պիտի անպատճառ ընկնեն, իսկ հետեւաներին գուցէ կաջողի այնքան ստոր չընկնելու. . . ընկածները կը լինեն նեղուկ սրանց հետեւող նոր, թարմ ոյժերի համար: Ապագան միայն կը գնահատէ նրանց այդ ծառայութեան համար:— Բայց ինչ թխուր միտիմարութիւն՝ իրան անձնապէս զօնը ներկայումք, ապագայ սերունդների ընթացքը հնչապնելու համար. . . Այնու ամենայնիւ այդ է ճիշդ է խիստ, թէ և սխալի եղբակացութիւնը անհերքելի փաստերից: Բայց ո՞վ կարող է ստիպել առանձին անհատներին այդ տեսակ զօհարութիւններ անելու, — ոչ ոք. . . բացի վարձուէրի լօգիկայից:

Կամենում էի օգուտ քաղել այդ նամակից, որ խօսեմ քիչ շատ աղտեղի ուսանողական դասի մասին, թէ երիտասարդների թէ կանանց մասին, բայց ժամանակը կարճ լինելով, յետ եմ զցում այդ նկարագրութիւնը հետեւեալ նամակին:

Յունվարի 18/30 Պ. Իզմ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Հեռագիրը հաղորդում է Իսպանիայից, թէ Մարդիկի մէջ կործանների ազդային ժողովը հրատարակեց Ամիգէյ թագաւորին և խօսանախյում յայտնեցին հանրապետութիւնը:

— «Independance Belge» լրագիրը հաղորդում է, որ Թիւրքիայի մէջ վիզիր Ռուչտի-Փաշան կամենում է հրաժարական տալ իր պաշտօնից: Նոյն լրագիրը պատմում է թէ թուրքաց աւերութիւնը շատ անհանդիստ է տեղական օրագրութեան սատարի յարձակուանների պատճառով: Լրագիրներից շատերը արգելվեցան, միւսները նախազգուշութիւն ստացան:

— Նոյն լրագիրը հաղորդում է, որ երկպառակութիւնները յունաց եկեղեցու կուսակցութիւնների մէջ Թիւրքիայում և նմանապէս հայ-կաթօլիկները և Հատուենանների մէջ սաստկանում են:

— Գրեզդնի լրագիրները հաղորդում են, որ Մէկիկայի աքսորված կայսրուհի կարլոտան, որ վերջին տարիները խելագարված էր, նորերումս վախճանվեցաւ Բէլգիայի Լաօն ամրոցի մէջ, Բրիտանից ոչ հեռու:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բոլոր մեր ջանքը իզուր է: «Մեղուն» մինչև հիմայ չէ կարող հասկանալ, որքան օգտաւէտ են թատրոնի վրա թարգմանական թեմական գրվածները (տես: «Մեղուն Հայաստ» № 3) . . . խեղճ:

«Մշակի» խմբագրութիւնը բացի կ. Պոլսի քանի մի լրագիրներից, ստանում է այժմ Զմուռնիայի, Արշալոյս Արարատեանի՝ շարթթաթերթը: Սա Թիւրքիայի հայոց լրագիրներից ամենահինն է՝ նա երեսուն տարից աւելի գոյութիւն ունի:

«Արշալոյս Արարատեան» լրագիրը հաղորդում է փարիզի օրագրաց մէկուն մէջ հետեւեալը կը կարդամք: «Մտիւս Լու. Կիւլորթէ, որ Գաղղոյ համալսարանին անդամ է, անցեալ Նոյեմբերի 26-ին սկսաւ հայերէն ընտրելագոյն գրագիտութեան դասաւորութիւնը ընել ի սեպական զարոյց արեւելան լեզուաց, իսկ հայերէն աշխարհարար լեզուն ուսուցանելու համար՝ իրեն զորժակից և փոխանորդ պիտի ունենայ կ. Պոլսեցի արժանա. Գրիգոր վարդապետ Մէրժեան»:

Մեր ստացանք պ. դոկտոր Անդրէաս Արծրունու գիտնական հետազոտութիւնը, որ արդիցաւ գերմանական «Zeitschr. d. Deutschen geologischen Gesellschaft» պարբերական հրատարակութեան մէջ, 1872 թ. — Սա Յէօլէստին անվանված միներալի մի նոր գէօլոգիական հետազոտութիւն է, որ երիտասարդ դոկտոր արել է պ. պրոֆեսոր Գրոթի (Groth) հրաւերով: Վերնագիրը այսպէս է՝ Ueber den Coelestin von Ruedersdorf und Mokkatam:

Մեզ գրում են Յիւրիից, որ պ. դոկտոր Յարութիւն Արեւելեանցը Յիւրիի համալսարանի մէջ ստացել է Պրիվատ-զոցէնտի տեղը, որ նշանակում է մասնաւոր պրոֆեսոր: Պրիվատ-

զօցէնտ ասում են գերմանական համալսարաններում այն պրոֆեսորներին, որք իրաւունք ունենալու զաստիճաններ անել և վճարող լսողներ ունենալ, բայց որը դեռ ևս համալսարանից անջն ստանում:

Մեր լուսմ կնք, որ մեծ պատին կովկասեւերած յատական քնկերութիւնը կամենու է տալ մի քանի հոգեր կօնցէրտնէր: Ընկերութեան կառավարիչ պ. Կիւլորթէ գիտաւորութիւնների այդ կօնցէրտներում ամենաերեւելի գրականի հետ օրպիսի են Բոսիլիի «Stabat Mater» կամ Մոցարտի «Requiem», երգել տալ և մահացող մի քանի երկրեցական շարականները: Յոուները, որ կատարումն աջող կը լինի որովհետեւ երգչների մէջ բազմաթիւ են հայեր և հայուհիք: Այդ կօնցէրտները ի հարկէ կը գրաւեն հայ-հասարակութեանը ուշադրութիւնը:

«Մշակի» մէջ տպվող պ. Բաֆֆիի Պարսկաստան նամակները, թարգմանվում են Շվեյցարիացու Քրանսիերէն լեզվով և պիտի տպվին Քրանսիական օրագիրներում:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Թիֆլիզի ՎԱՃԱՌԱՆՈՑ (Փետրվարի 7-ին):

ՈՍԿԻՆ (պօլուիմպէրալ)	6	8	4
ՓՈՒԱՆԱԿԱԿԻՐ (բարաթ) Պօլս			
Վճարվիք (լիւր Օտաննան)	6	80	4
ԲԱՄԲԱԿ Երևանու	4	60	4
« Երկրորդ տեսակը	4	50	4
« Ամերիկայի սերմից	6	70	4
ԲՈՒՐՆԻ Թուշի	8	30	4
« Երկրորդ տեսակը	8	—	4
« Թարեխամի	4	80	4
ՇԱԲԱՐԸ Ռսի (Բրոցիու)	8	—	4
« Կապտիկա	7	85	4
« Ղազարնիցու արանցիդ	6	65	4
մարք վճարած	8	90	4
ՇԱԲԱՐԱՒԱՋԸ Ռսի	6	60	4
ՂԱՂՎԱ Լիւնանի լաւը	14	50	4
ՂԱՂՎԱ Մօկո, շատ լաւը	15	60	4
« Մարտիկայի, ցածրը	12	40	4

ԱԼԻՐԸ Երևանի երկրորդ տեսակը	1	40	4
« Կապտիկա տեսակը	1	50	4
ԱԼԻՐԸ Գեանջու հասարակ	1	60	4
« Շորաքալու	1	60	4
ԳԱՐԻՆ Երևանի	1	—	4
ՊԸՊԸՂ	10	50	4
ՇԻՐԱՍԻ Էթ	9	70	4
ՄՈՍ	12	50	4

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վասպուրականի վանօրէից Լիւիս Կուսեց սրբ. Անպատաց երկու գործաներ՝ որոնք որ գտնուում են ի Տրիփլիս քաղաքին ի Չիլիաշէն եկեղեցւոյ փոխոցում կից Տէր Ասատուրոյի տան. վերանորոգութեան կարօտութիւն ունենալով համար յիշեալ Անպատաց վարդապետն կճանուցանեն ում որ պիտոյէ քանի տարի երևան տան աւանց վարձուց ինքն իւրեւ ժողով ի հմանց վերանորոգել բարեհաճի:

ԲՅ ԿԱՅՈՒՄ

моёмъ, находящемся на Вельяминовской улицѣ, противъ Англійскаго клуба, въ домѣ Кетхудова, составляются дѣловыя бумаги какъ-то: прошения, аппеляціи, кассации и прочія также проекты всякаго рода нотаріальныхъ актовъ и обязательствъ.

Плата возможно уменьшана.
Петръ Антоновичъ Чарковскъ.

Հ. ՄԿՐՏԻՉ ՅՈՎՎԱՆԻՍՅԱՆԸ պատիւ է համարում յայտնել Թիֆլիսի յարգել հասարակութեան, որ նորերումս արտասանելից ստացաւ «Երկաթե կասեթ» որոց քաչիրը հետեւան են, 15 փութ. 21, 23/2, 24, 36 և 41 փութանոց կան այնպիսիք, որոնք ունին երկու գուշու, երբ որ ուրիշն և պահանջում են կրակի և կորելուց: Յանկացողները գնել յիշեալ կասեթը, կարող են դիմել Միսիի փողոցում պ. Միսիի քարվաստարան № 52: Պէտք է ունեցա ի նկատի, որ գները չեն այնքան բարձր: